# ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՅԵՐԳԵՐ

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ
ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ
ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ
ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳԵՈՐԳ ԳՐԻԳ
ՅԵՐՎԱՆԴ ԳԱԼՃՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԽԱԼԱԹ
ՍԱՄՎԵԼ
ՄԻՐԱՔ ՄԻՐԱՔՅԱՆ
Բ. ԿՈՐՅՈՒՆ

16

«ՊՐՈԼԵՏԱՐ»-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ

891.99 24330-59
Ա-23

ПК з. 243 т. 3.000.000

891.99
Ա-23

8 NOV 2011

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

№ 16

„ՊՐՈԼԵՏԱՐ"Ի
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՅԵՐԳԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՊՐՈԼԵՏԱՐ» ՕՐԱԹԵՐԹԻ
ԹԻՖԼԻՍ
1936 Թ.

24 JUN 2013

41759

Գլխ. խմբ.՝ Կ. ԱՋՐՈՅԱՆ
Թողարկիչ՝ Ս. ԴՈՎԼԱԹՅԱՆ

БІБЛІОТЕКА
Академії Наук
УСРР

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ–Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

24330.J9

Տպ. «Զարյա Վոստոկա»-ի Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան

Պատվեր 1665 Գլավլիտ 12536 Քանակ 2000

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

(Ժողովրդ. պոետ)



# ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՅԵՐԳ

Գարնան անդրանիկ այս ուրախ օրին
Դուրս յելեք խումբ-խումբ բանվոր ընկերներ,
Յեվ փողջույն տալով դաշտ ու ձորերին՝
Յերգե՛ք մեր ազատ, տոնական յերգեր:

Թող արձագանքը ձեր հաղթ յերգերի,
Թող սարսափ ազդի թշնամու սրտին,
Թող ցնցի հոգին բռնավորների,
Հանգիստը խլի ճնշող հարըստի:

Յեվ թող խլանա ձայնը թնդության
Աղմուկ չյավի գործարաններից.
Այսօր մեր տոնն է վեհ գիտակցության—
Թող պայթի ազատ համառ զայրույթից:

1906

## ԿԱՐՄԻՐ ԳԱՐՆԱՆ

— Ասրե՞լ…
— Ասրել միայն կարմիր գարնան,
Երբ ջրերն են իրար խառնվում—
Գետեր դառնում,
Երբ կանաչն է հասակ առնում,
Փարթամանում,
Ասրել միայն կարմիր գարնան։

— Կռվե՞լ…
— Կռվել միայն կարմիր գարնան,
Երբ վորոտն է ահեղ թնդում,
Երբ կայծակն է յերկինք քանդում,
Կռիվների բացում քառս,—
Տարերքների խոլ ովկիանոս։

— Մեռնե՞լ…
— Մեռնել միայն կարմիր գարնան,
Երբ հեղեղն է լեռներ խոցում,
Ու կատաղի ուղի բացում,
Ինչ կա անպետք՝ տանում իր հետ,
— Անցած կյանքի էլ վո՛չ մի հետք։

1920



ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ



## ՄԱՅԻՍԱԿԱՆ

Հեղեղի նման յեկանք այսօր վողողելու փողոցը մեծ,
Մեր մանկության որրանը հին, ուր զրկանքն էր,
վոր մեզ ծնեց։

Փողոցներովն այս աղմկոտ, վոլոր ու ծիգ,
լայն և անծուկ,
Անցնում են այժմ շարքերը մեր խրոխտաքայլ
ու թևվանցուկ։

Մռայլացումի փոշիներին հանձնեցինք մենք
ցավ ու կական,
Հզոր է մեր յերթը ներկա, փոթորկածին
ու մոգական։

Մենք, կերտողները գալիքի, աշխատանքի
բանակն ենք հաղթ.
Քանդում ենք այժմ աշխարհը հին, կռում ենք նոր
արև ու բախտ։

Մերն է այսօր աշխարհը վառ ու՜ կյանքը նոր,
յեռուն և ալ,
Տենչում ենք մենք պայքար, թռիչք, տենչում ենք մենք
խինդով հեվալ։

Հայացքը մեր արևմներին՝ այսօր իջանք փողոցը մեծ,
Ուր մայթերի վրա յերեկ բիրտ զրկանքն եր,
վոր մեզ ծնեց։



ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ



## ՄԱՅԻՍՅԱՆ

1.

Դաժան գիշերում այն ահեղ մարտերի
Մենք տարել ենք կարմիր քո դրոշը.
Մենք չենք նահանջել արյունոտ դիրքերից,
Մենք անսասան, մենք շիտակ գրոհել ենք,
Թշնամու ողակը տրորել ենք,
Մենք մեր բախտը քո մեջ վորոնել ենք,
Ու մեր վառ սրտերում որորել ենք
Վերջնական հաղթանակդ, Մայի՛ս։

2.

Մեր ազատ աշխարհում մենք տոնում ենք հիմա
Մեր ազատ մայիսը.—ծփու՜մ են ահա
Դրոշակները բոցե Մոսկվայից—Յերևան,
Բոլոր ծայրերում մեր պայծառ Միության
Հնչում է նոր հիմնը փառքի և լիության.
Մենք յերգում ենք յերգը գարնան ու վեհության,
Տոնում ենք հպարտ ու խանդավառ
Վերջնական հաղթանակդ, Մայի՛ս։

### 3.

Բայց դեռ չի՛ խորտակվել քո շղթան դարավոր
Այնտեղ, ուր տիրում են տիրանները չարկամ.
Այնտեղ տեր են հիմա մտրակն ու սով արքան,
Նստած է գնդանում Թելմանը փառավոր,
Ու չկա դեռ այնտեղ փրկության առավոտ,
Գործազուրկն է կանգնել հուսահատ ու կարկամ,
Ու յերգում են նրանք վրեժի ծարավով
Վերջնական հաղթանակդ, Մայի՛ս։

### 4.

Դաժան գիշերում այն ահեղ մարտերի,
Նա տանում է կարմիր քո դրոշը,
Նա չի նահանջել արյունոտ դիրքերից.
Միշտ անսասան ու շիտակ գրոհում է.
Թշնամու ողակը տրորում է,
Իր բախտը նա քո մեջ վորոնում է,
Իր վառվող մեծ սրտում որորում է
Վերջնական հաղթանակդ, Մայի՛ս.

### 5.

Վերջնական հաղթանակդ, Մայի՛ս...։

1936—IV



ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ



## ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԻՆ

Մեր սիրտը նորից բացվել է յերահ,
Վորպես այս գարնան դաշտերը ծաղկուն,
Մեր կամքն է ջահել, վոր կհուրհրա
Դրոշների պես վառ ու շառագույն
Այս աղմկահույզ աշխարհի վրա։

Կանգնել ենք առույգ, ինչպես մի ռազմիկ
Հաղթանակներից պայծառ, խլրտուն,
Կանչում ենք, շաչում ու հազար ու մի
Յերգեր ենք կրկնում ուրախ ու խնդուն,
Յերգերը մեր բոլոր կարմիր հուզումի։

Մեր սիրտը նորից բացվել է յերահ,
Վորպես այս գարնան առավոտը վառ,

Այսօր միայն մենք աշխարհի վրա
Տեսնում ենք հեռուն, լուսեղ, հուսավառ,
Ու մերն են բոլոր զենքեր ու զրահ...

* * *

Նայիր ուր կուզես, ուր որ կա մի շունչ,
Ուր որ հույզերի կա նշույլ միայն,
Կա յեվ ընդվզում, պայքար ու դաշույն,
Ընկնում են, անցնում հինն ու հնամյան,
Նեխված օրերին իջնում ե աշուն...

Ու իր անկումի մշուշի մեջ ել,
Հինը ծանր ե դեռ սեվ ամպի նման,
Իր բարձունքներից նա նոր ե իջել
Ու դեռ ծածկում ե ուղին անսահման,
Վորով պիտ անցնի գալիքը ջահել...

Բոցավառ, բորբոք կրակ պիտ լինի,
Հրդեհ ու ժայթքում՝ համաշխարհային,
Ցանկությունը բարկ բյուր միլիոնների,
Վոր անհետ անցնի մշուշը իր հին
Ու բացվեն լուսեղ ճամբեքը նորի։

Յեվ մե՛նք ենք միայն, մե՛նք ենք, վոր կարող
Հրդեհ ենք վառել ես աշխարհով մեկ.
Տեսնում եմ ահա՝ այրվում ե սեվ հողն,
Յերկիրն ե փռվել հուր ու հրաշեկ
Գալիքի հանդեպ վառ, արեվաշող...

1926—1927 թ. թ.



# ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ

Մայիսներ են յեղել ուրիշ՝
արնաթաթախ ու արնաներկ,
Ըմբոստ դեմքեր պատրաստ կռվի,
մտրակ, սվին ու դիակներ...
Մայիսներ են անցել հոխորտ,
հերոսական ու հրաշունչ,
Ու բյուր շարքեր շղթայակապ
ուղիներում մռայլ ու մունջ...

Հիշի՛ր, ընկեր, հիշի՛ր այսօր
մայիսների շարանն անցած,
Հին օրերի, զարհուրանքի,
ահի, մահի մայիսն անցած.
Ով չի հիշում, պատմիր նրան,
սեվ օրերի մշուշն արյան,
Պատմիր դաժան այդ օրերի
ճնշումները միջնադարյան...

Ու յերբ վաղը նա դուրս կգա
մեր օրերի մայիսին վառ,
Յերբ կտեսնի շարքերն ստվար
բանակների յերահ, պայծառ,

Ու կսուզվի այդ շողշողուն
ալիքներում հոծ ու հուռթի,
Դրոշներում լուսեծածան
հանդիսավոր այդ մեծ յերթի,

Յերբ կսկսվի տարափն անվերջ
լոզունգների՝ հատու, արի,
Ու կզնգա յերգը ուրախ,
լենինյան յերգն այս նոր դարի.
Յերբ կպոռթկան վողջույնների,
կանչերը ջերմ ու սրտալի,
Յեվ ամեն ինչ յերբ հագենա
վոգով անհուն ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻ,
Թող նա հիշի, թե ինչպիսի
մայիսներ են յեղել ուրիշ,
Մայիսները հին որերի,
արնաթաթախ ու արնանիշ...

Ու թող հիշի, հիշի և՛ այն,
վոր դեռ հիմա և հենց այսոր,
Կան ու ինչքա՜ն բազում շարքեր
բաղցած ու ճորտ, ու դեռ անզոր.
Վորոնց համար մայիսը դեռ
դասակարգի պայքար է բորբ,
Վորոնց համար դեռ արյունով
պիտ նվաճվի Մայիսն այս նոր
Բոլոր, բոլոր վայրերում այն,
ուր ճնշումն է պարզված դրոշ,
Բայց ուր ուղին մայիսմեկյան
հաղթանակի պարզ է, վորոշ...



## ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ԱՀԱ...

(«Մայիսմեկյան բանակներին» շարքից)

Տեսնում եմ ահա
Բյուրավոր գործարանների
Ծխի ու գոլորշու մշուշի մեջ թանձր
Յեռում է Մոսկվան,
Լեգենդային
Այս նոր որերի
Հսկան...
Տեսնում եմ Կրեմլը,
Հրապարակը Կարմիր
Յեվ աշտարակները նրա արծվածայր
Ու պատմական...

Ահա մավզոլեյը Նրա,
Վորի անունը աշխարհից լայն է,
Արևի պես ջերմ
Ու թովիչ,
Համայն է...

Մավզոլեյը, վորպես խորհուրդ հավերժական
Գալիք բոլոր դարերի,
Վորպես մերկացված սիրտը գրանիտե

Հրաշունչ օրերի,
Որ հավել է մեծ հրապարակին
Ամուր
Ու հավետ անշարժ
Յեվ իր պարզ գծերով ավելի բարձր է,
Քանց գագաթները բոլոր բարձունքների...

* * *

Յեվ ահա Նա
Ղեկավարը պողպատե,
Դեպի մավզոլեյը քայլում է հանդարտ.
Ու ամեն մի քայլը Նրա հաստ
Լսվում է սրտիդ մեջ բաբախող
Ու արձագանքվում է անդադար
Աշխարհի բոլոր մասերում,
Նրա բոլոր յերակներում արյունատար,
Նույնպես հաստ
Յեվ նույնպես հաստատ...

Ահա Նա բարձրանում է...
Մավզոլեյի վրա
Իր զինակիցներով
Յերևում է
Մեծ Ղեկավարը...
Բայց ի՞նչ պատահեց,
Լսվում է հեռվից սաստ մի փոթոր,
Բարձրանում է,
Ալեկոծվում օվկիանի նման
Ու մի ակնթարթում
Հեղեղում է ամբողջ հրապարակը,



Մոսկվան,
Ամբողջ աշխարհը...

Միլիոնների,
Հարյուրավոր միլիոնների՝ բարձրացող
Ու ամեն ինչ հեղեղող ձայնն է,
Վորոտալից վողջույնների
Արձագանքը մրրկվող...
Մրրիկ է,
Որ բղխում է, պոռթկում
Մասսաների սրտի խորքից անսպառ,
Միլիոնների, վորոնք հաղթել են
ու հպարտ են հաղթանակով,
Միլիոնների, վորոնք տենչում են դեռ
հաղթանակ ու պիտ հաղթեն,
Նրանց բոցեղեն վողջույնն է
բազմաբարբառ...
Վողջույնը արշավող բանակի
Իր սիրելի Ղեկավարին,
Ուսուցչին
Ու մեծ ռազմագետին.
Որ տանելու յե իրեն Վերջին մարտի
Ու վերջին
Հաղթանակի...

* * *

Հեղեղի պես հզոր ու վարարուն
Ալեկոծվում են,
Հոսում են,
Դրոշները կարմիր, վորպես պայծառ գարուն,

Շաչում են զենքերը հաղթական,
Զնգում են շարքերը ռազմիկների,
Միլիոնները յերգում են,
Քայլում են,
Ցնկել են հեղեղելու աշխարհը…
Բարձրացել է ամբողջ դարը,
Սկսվել է չտեսնված համաշխարհային
արշավը, վարը…
Սավառնակները ծվեն-ծվեն
պատառոտում են տիեզերքը,
Իսկ մավզոլեյից
Նայում է հանգիստ ժպիտով
Ինքը, Ղեկավարը…

Մայիսի մեկն է,
Մոսկվայում…
Բայց լսիր,
Հորիզոններից հեռու
Մեկը կարծես ատամ է կրճտում…
Ո՞վ է,
Մեզ դեմ է վայում…

20 ապրիլ, 1924 թ.



24330-Մ



ԳԵՈՐԳ ԳՐԻԳ



# ԽՆԴՈՒՆ ԿԱՑ, ՋԱՆ

Մայիսմեկյան արեվի պես,
Արեվի պես խնդուն ես, ջա՜ն,
Աչերիդ մեջ աստղերի պես
Շողշողում են լալ ու մարջան։

Վզիդ կապած կարմիր լալա,
Քայլում ես հաղթ, հպարտ, անպարտ,
Իմ անուշիկ, պիոներ բալա,
Քայլում ես հաղթ, խնդում զվարթ:

Բարձր պահած դրոշ մի ալ,
Նայում ես դու կյանքի հեռուն,
Աչերիդ մեջ՝ զմրուխտ ու լալ,
Աչերիդ մեջ՝ պայծառ գարուն։

Քայլի՛ր, քայլի՛ր, քայլի՛ր ուժգին,
Ցերգի՛ր խրոխտ, խնդա՛ ուրախ,

Մեր մեծ յերկրում մայիս մեկին
Յե՛վ պայքար կա, և՛ յերգ, և՛ խաղ...

Նայի՛ր, նայի՛ր, գալիս են, հե՜յ,
Ինչքա՜ն-ինչքա՜ն խրոխտ շարքեր,
Սոցիալիզմի շենքը կերտող
Ջահել ու ծեր միլիո՜ն շարքեր...

Ո՜, ինչե՞ր չեն տեսել նրանք
Մայիս մեկի այս մեծ տոնին,
Ինչքա՜ն անգին զոհեր տվել
Արնածարավ ցարի թրին։

Քայլի՛ր, քայլի՛ր, քայլի՛ր ուժգին,
Հին օրերը անցան, կորան,
Մեր մեծ յերկրում սովետական
Տո՛ն է, տոն է մայիսմեկյան։

Մայիսմեկյան արևի պես,
Արևի պես խնդուն կաց, ջա՜ն,
Աչերիդ մեջ աստղերի պես
Թող շողշողան լալ ու մարջան...



# ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՅԵՐԳ

Թող մայիսյան արևը վառ
Մեր սրտերում շողշողա,
Դրոշները կարմիր ու զառ
Փողոցներում փողփողան։

Ազատ կյանքի, աշխատանքի
Յերգերը թող կարկաչեն,
Հրավառված մեր շարքերը
Կուռ միությամբ թող շնչեն...

Կոշտ ձեռքերով կերտել ենք մենք
Ազատ օրեր, ազատ կյանք,
Թող ծավալվի ամենուրեք
Լույս, խնդություն ու բերկրանք...

# ՄԱՅԻՍ

Ծաղկանց հոտով,
Պայծառ ժպտով
Սիրուն մայիսն է գալիս.
Սար ու ձորին,
Լայն դաշտերին,
Հնչուն վողջույն է տալիս։

Ինչքա՜ն թռչուն,
Ինչքա՜ն մրջյուն,
Ինչքա՜ն թիթեռ է բերում.
Գույն-գույն ծաղկով,
Կանաչ գորգով
Սար ու անտառ զարդարում։

Հեռու հանդում,
Կանաչ դաշտում,
Յերգն է հնչում մաճկալի.
Ուրախ սրտով,
Բարի ժպտով
Վառ հույսերով լի ու լի:

Կանաչ վոտով,
Ծաղկանց հոտով,
Նախշուն մայիսն է գալիս.
Սար ու ձորին,
Ծով դաշտերին,
Հնչուն վողջույն է տալիս...



ՑԵ. ԳՈՒԺՅԱՆ



# ԳԱԶԵԼ ՄԱՅԻՍՅԱՆ

Քանի՜ դարեր, քանի՜ ջրեր հոսել են խուլ,
պայծառ մայիս,
Քանի՜ սրտեր, քանի՜ տեղից խոցվել են լուռ,
պայծառ մայիս։

Կյանքն իշխանի՝ մերկ սրի պես կախվել եր հար
կյանքի գլխին,
Յեվ արյունը ցող եր կաթում քո ծաղկունքին,
պայծառ մայիս։

Տեսել ես դու որվա լույսից ահով փախչող
ծեր հողվորին,
Մտրակն այն սեվ, վոր շաչում եր նրա մեջքին,
պայծառ մայիս։

Լսել ես դու շչակների սուլոցը չար ու կերկերուն,
Յեվ կեղեքվող բանվորների ճիչը ըմբոստ,
պայծառ մայիս։

Ծովածավալ այդ ցավի դեմ նուշ աչքերով
թախծել ես դու,
Յեվ թախիծը քո կրծքի տակ լեռնացել է,
պայծառ մայիս։

Սակայն մի օր, մի օ՜ր անեղ՝ ծխի միջից ու փորոտի
Ծնունդ առավ հուր պատանին—Հոկտեմբերը,
պայծառ մայիս։

Պատանին հուր՝ թափով ձգեց դրոշը իր
հաղթ ու պուրպուր
Յեվ շնչով մեկ՝ ազատության փողը փչեց,
պայծառ մայիս։

Յելա՜ն, յելա՜ն զանգվածները բազուկներով
պողպատաձույլ,
Որպես տարերք գրոհ տվին բերդերի դեմ,
պայծառ մայիս։

Դու նայեցիր հուր պատանու աչքերին ծով,
Թափին խիզախ,
Ու սիրտը քո կակաչի պես բացվեց իսկույն,
պայծառ մայիս...

Մարտերի մեջ ընկածներին, զոհվածներին
հազա՜ր-հազա՜ր
Մատներով նուրբ վառ պսակներ հյուսեցիր դու,
պայծառ մայիս։



Իսկ յերբ շողաց հաղթանակի իմաստությունն
արեգնափայլ,—
Դաշտ ու սարեր լեցվեցին քո գիլ կարկաչով,
պայծառ մայիս։

Այդ օրվանից, օ՜, կյանքը մեր արեվի տակ,
հողմերի դեմ՝
Որպես հավերժ մի շատրվան՝ խփում է հար,
պայծառ մայիս։

Ամեն տարի, յերբ մտնում ես մեր դաշտերն ու
փողոցները,
Դու մեր սրտում նոր գրոհի յերգ ես հյուսում,
պայծառ մայիս։

Յե՞րբ է գալու այն օրը հաղթ, վոր յերգը քո
անուշ այնպես՝
Խինդով վառի յերկրագու՜նդը, յերկրագու՜նդը,
կարմիր մայիս։



ՎԳԵՈՐԳ ԽԱԼԱԹ

## ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ

Մայիսն ապրում է՜ իմ մեջ, և քո՛ մեջ,
Մանկան, ծերունու սրտի ծալքերում.
Վառում նոր կյանքի և սիրո նոր տենչ
Ու բյուր սրտերին խնդություն բերում։

Մանուկներն են, տե՛ս, խաղում, կարկաչում,
Զինջ, արեվացոլ առուների պես.
Նրանց սրտերից խի՛նդն է զիլ կանչում՝
— Մայի՜ս ջան, մայիս, ա՛հ, ինչքա՜ն լավն ես։

Փողոցները լի մարդկանցով անթիվ,
Նվա՜գ, ծափ ու պա՜ր, նոր յերգեր թնդուն...
Յեվ հսկա մի յերթ վարար ու ալթե,
Մայիսմեկյան յերթ, գարնան պես խնդուն։

— Տե՛ս, արեգակն ել մեր խնդությամբ վառ,
Թրթռում է ջերմ, վորպես ալ դրոշ։
Բայց... ի՞նչ, ի՞նչ յեղավ... նրա դեմքն անմար
Ծածկվեց թախիծով, վշտով անորոշ...



Նա տեսնում է հին, ուրիշ յերկրներ,
Հսկա քաղաքներ, փողոցներ վողող,
Ալ-վառ դրոշներ, պարզած բյուր կռներ,
Լսում կրակոցներ, ճիչ, նվոց, բողոք...

Ու գոչում է գոռ, բորբ զայրույթով լի.
— Ե՜յ, դու՛ք, դահիճնե՛ր, յերկար չե՛ք խնդա...
Դրանք վեր կելնեն ելի՛ ու ելի՛,
Վոր նորից գրոհեն ու ձե՛զ, ձե՛զ վերջ տան։

ՍԱՄՎԵԼ



## ՅԵՐԳ ՄԱՅԻՍԻՆ

Հագել ես դու թավիշ ու խաս, արեվավարս
ջան իմ մայիս,
Դեմքիդ հազար նախշեր ու խալ, շող ու շիրազ,
ջա՛ն, իմ մայիս,
Թող արբենամ բույրովդ անուշ գարնանային
քո վարդերի,
Շայիրներին՝ դու շունչ ու խաղ, դու՝ նորահարս,
ջա՛ն, իմ մայիս։

Բարձրացնում ենք թասերը մեր յերգ ու պարով
ու ծիծաղով,
Կարկաչում է վառ սերը մեր յերգ ու պարով
ու ծիծաղով,
Բարի գալուստ քեզ մեր անգին, բարի գալուստ,
մեր ազիզ հյուր,
Քո կենացն ենք խմում այսոր, յերգ ու պարով
ու ծիծաղով։



Արի՛, մտի՛ր դաշտերը մեր խնդությունով
գարնանային,
Քեզ կողջունեն վաշտերը մեր խնդությունով
գարնանային,
Արի՛, և թող քաղաքները, կոլխոզները մեր ունեվոր,
Ծծեն բույրը քո բարեբեր խնդությունով
գարնանային։

Մեր աշխարհում անմահացող՝ լույսը առատ
դու կտեսնես,
Մառանները լիքը հացով, հողը պարարտ
դու կտեսնես,
Աղջիկներին մեր թավրան ու հարսներին
մեր բախտավոր,
Այգեստանում մեր լուսացող խինդով վարար
դու կտեսնես։

Քո մայիսյան ծաղկոցի պես բաղեր ունենք
մեր աշխարհում,
Վարդի համար մարգարտաշար թաղեր ունենք
մեր աշխարհում,
Գիտեմ, ուրիշ վոչ մի աշխարհ չի տա ծաղկիդ
շող ու շիրա,
Գովքդ ասող դեռ բյուր հազար տաղեր ունենք
մեր աշխարհում։

Հագել ես դու թավիշ ու խաս, արեվավարս
ջան իմ մայիս,
Դեմքիդ՝ հազար նախշեր ու խալ, շող ու շիրազ,
ջա՜ն, իմ մայիս,
Թող արբենամ բույրովն անուշ գարնանային
քո վարդերի,
Տայիրներին՝ դու շունչ ու խաղ, դու՝ նորահարս,
ջա՜ն, իմ մայիս։



ՄԻՐՈՆ ՄԻՐԱՔՅԱՆ



## ՄԱՅԻՍՅԱՆ ՀՈՒՇԵՐ

Վոսկետեսիլ յերազի պես
Դեռ հիշում եմ յես մեկին.
Նա աչքերիս ծովում անտես
Թողել ե իր վառ հոգին։

Յեվ թողել ե իր հոգու հետ,
Հուշերի լույս մի վառ ջահ,
Վոր իմ կյանքում մի անգամ գեթ՝
Հիշեմ նրան՝ մերձ ի մահ։

Նա զոհ գնաց այն արնածով
Խենթ օրերում մայիսյան,
Յեվ իմ սրտում արնոտ գծով
Թողեց մի հուշ, մի սուր ցավ։

Ո՜, այնքան խոր, այնքան հատու
Նա շշնջաց արնաքամ՝
«Դժվար ե, յերբ սիրտը մարդու,
Հանում են դեռ վաղաժամ։

*Գիտեմ, վորդիս, յերբ բարձրանաս,*
*Վորպես ազատ դարի մարդ,—*
*Գուցե մեկ որ սիրտդ բանաս*
*Խոսքերիս դեմ այս անմար։*

*Գիտեմ՝ կանցնես դու փողոցով—*
*Դեմդ կգան շենքեր շատ,*
*Յեվ կժպտա վեր խոյացող*
*Կայանների մի արշավ։*

*Գիտցի՛ր, վորդիս, վոր հայրը քո,*
*Յերազել ե այդ նորին*
*Յեվ ընկել ե սիրտը վերքով,*
*Մայիսմեկյան որերին»...*

Բ. ԿՈՐՅՈՒՆ



## ՔԱՅԼԻՐ ԴՈՒ, ԻՄ ՀՊԱՐՏ ՊԻՈՆԵՐ

(Մայիսյան յերգ)

*Ծիծաղկոտ որերում մեր հիմա*
*Քայլում ես դու հպարտ պիոներ,*
*Չես տեսել դու դաժան յերեկվա*
*Կախաղանն ու շղթան մահաբեր:*

*Պայքարի այդ ճամբին մեծ, փշոտ,*
*Ուր զոհվել ե բյուր կյանք ու արյուն,*
*Բացվել ե գեղաշունչ, արեվոտ,*
*Խնդալից ու չքնաղ կյանք սիրուն։*

*Հաղթական շարքերով վառվռուն*
*Քայլում ես դու հպարտ, անվրդով,*
*Շուրջը քո բացվել ե մով-գարուն*
*Մայիսյան կենսաբույր ծաղկունքով։*

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

Կյանքի հուր կորովը քո սրտում
Կարմրավարս դրոշներ պինդ գրկած,
Խնդության նոր փողոց ես յելնում,
Գարնան պես յերփներանգ վարդ հագած։

Պայքարի մեծ հիմն է զիլ հնչում
Ցույցերում մեր այսոր վեհ, հպարտ,
Միլիոնները ձուլված կուռ յերթում
Տոնում են մայիսը մեծ, անպարտ...

Մեր յերգը—լույս փարոս մի կարմիր—
Աշխարհին ճամբա յե նոր բացել,
Յերգիր դու, զանգրահեր պիոներ,
Յերգը քո բոցաշունչ ու ջահել։

Թող հնչեն շեփորներն ու զրնգան,
Ցույցերի ալիքը թանձրանա,
Քայլիր դու դեպի մեծ ապագան,
Թող հնչի կանչը քո միշտ անահ...

Ծիծաղկոտ որերում մեր հիմա.
Քայլում ես դու հպարտ պիոներ,
Ձեռ տեսել դու դաժան յերեկվա,
Կախաղանն ու շղթան մահաբեր։

1925 Թ. Թիֆլիս.

БІБЛІОТЕКА
Академії Наук
УСРР

# Ց Ա Ն Կ

Հակոբ Հակոբյան—Մայիսմեկյան յերգ . . . . . . . . 3
» Կարմիր գարնան . . . . . . . . . 4
Աղասի Վշտունի—Մայիսական . . . . . . . . . . . 6
Գուրգեն Մահարի—Մայիսյան . . . . . . . . . . . 7
Աղասի Վարդանյան—Մայիսմեկյան բանակներին . . 9
» Մայիսմեկյան . . . . . . . . 11
» Տեսնում եմ անտ . . . . . . . 13
Գեորգ Գրիգ—Խնդուն կայ, ջան . . . . . . . . . 17
» Մայիսմեկյան յերգ . . . . . . . . . 19
» Մայիս . . . . . . . . . . . . . . 20
Ցե. Գալճյան—Գողել մայիսյան . . . . . . . . . 21
Գեվորգ Խալաթ—Մայիսմեկյան . . . . . . . . . 24
Սամվել—Յերգ մայիսյան . . . . . . . . . . . 18
Միրաք Միրաքյան—Մայիսյան հուշեր . . . . . . . 26
Բ. Կորյուն—Քայլեր դու, իմ հպարտ պիոներ . . . . . . 32

ՀՀ Ազգային գրադարան
NL0336118

15/1936

41759

36 625

ԳԻՆԸ
50
ԿՈՊ.

ПЕРВОМАИСКИЕ ПЕСНИ

(Сборник стихов)

(На армянском языке)

ИЗД. ГАЗ. „ПРОЛЕТА

891.99
Ս-23